

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ Զ-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱՂԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՀԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ Տ. Գարեգնի՝ Սրբազան եղբօր Մերում հարազատի, Ամենապատիւ Պատրիարքին Երուսաղէմի՝ Տ. Կիւրղի Արքեպիսկոպոսի և Տեղապահի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ՝ Տ. Գէորգայ Արքեպիսկոպոսի, Գերապատիւ Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից, Մարկաւագաց և ամենայն պաշտօնէից եկեղեցւոյ և հաւատացեալ համայն ժողովրդեան Մերում՝ հարազատից Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Այսու ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԱՒ ՄԵՐՈՎ յայտ առնեմք ամենայն ժողովրդեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ ի Խորհրդային Հայաստանի և ի Խորհրդային Միութեան, որպէս և հաւատացելոց, որ սփռեալք են ի Պարսկաստան, ի Հնդիկս, յԻրաք, ի Սիւրիա և Լիբանան, ի Պաղեստին և յԵգիպտոս, ի Յունաստան, ի Բուլղարիա և ի Ռումանիա, ի Ֆրանսիա, ի Միացեալ Նահանգս և ի Կանադա, ի Հարաւային Ամերիկա, յԱրգենտին և ի Բրազիլիա և յայլ տեղիս, երէ ի 22-ն յունիսի՝ ընդ նախագահութեամբ Շնորհազարդ Կաթողիկոսին Տանն Կիլիկիոյ՝ ԿԱՏԱՐԵՑԱԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ յԱթոռ Ս. Լուսաւորչի՝ ՄԻԱԲԱՆ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ համարէն 111 պատգամաւորաց, որ ժողովեալք էին ի Ս. Էջմիածին, ի մերմէ աշխարհէս և յայլոց Պետութեանց յընտրութիւն նորոյ Կաթողիկոսի: Իսկ յետ երկուց աւուրց՝ ի 24-ն նոյն ամսոյ ընկալաք զօձումն Հայրապետական ի ձեռն Կաթողիկոսին Կիլիկիոյ և ենգից եպիսկոպոսաց ըստ ծիսի և աւանդութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ:

Զայս Եկեղեցական-Ազգային ժողով համարիմք արտաքոյ իմն կարգի ի պատմութեան մերում, զի զայս առաջինն յընտրութիւն և յօծումն Կաթողիկոսի Ամենայն Հայոց եկեալ էին Շնորհազարդ Կաթողիկոսն Տանն Կիլիկիոյ հանդերձ եկեղեցական և աշխարհիկ պատգամաւորօք իւրովք, որպէս և Ամենապատիւ Պատրիարքն Հայոց Երուսաղէմի և Տեղապահն Պատրիարքութեան Հայոց Կ. Պոլսոյ, որով առաւել ևս հաստատեցաւ միասնականութիւն եկեղեցւոյն Հայոց:

Արտաքոյ կարգի են ապահէն և ներկայութիւն Նախագահին Խորհրդոյ համայն Դաւանութեանց Խորհրդային Միութեան, որ յատկապէս եկեալ էր ի Մոսկվա մայրաքաղաքէ, սոյնպէս և ներկայութիւն Նախագահին Խորհրդոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ: Ընդ որ գոհանամք յոյժ և պատիւ մեծ համարիմք Հայրապետական Աթոռոյն Հայոց:

Ի ժողովի աստ ընտրեցան բազումք խնդիրք, որք հային ի վերակազմութիւն Մեծի Տանս, ըստ տնտեսականին և ըստ վարչականին. հաստատեցաւ և նոր ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ի տեղի Պոլոժէնիայի ըստ ոգւոյ պատմական աւանդութեանց եկեղեցւոյ մերոյ և ըստ արդի հանգամանաց: Զպատճէնս արձանագրութեանց ժողովոյ և զՍահմանադրութեան ունիմք առաքել առ ամենայն Առաջնորդս և առ եկեղեցական վարչութիւնս Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ ի գիտութիւն և յառաջամանակեայ կիրառութիւն:

Քանզի ի փոխադրութենէ Ս. Աթոռոյն ի Սսոյ Էջմիածին անցեալ էին աւելի քան զ500 ամ, ուստի ժողովն բարւոք համարեցաւ զայս մեծ և պատմական իրողութիւն յաւերժացուցանել յոբելինական հանդիսի. զայսմանէ տալով գիտել հաւատացելոց

մերոց՝ ունիմք արձակել զառանձինն Կոնդակ և հրահանգս այսր որոշման:

Յերկրորդում նստի ընթերցաք Մեք զՏեղեկագիր ընդարձակ յաղագս նիւթական և բարոյական հանգամանաց Մ. Աթոռոյս. տալով զտեղեկութիւնս վասն նորոգ կարգադրութեանց Խորհրդային Կեդրոնական Կառավարութեան ընդ ստորագրութեամբ բարեացակամ Նախագահի Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ՝ համաձայն գրաւոր խնդրանաց Մերոց, դնին ընդ տեսչութեամբ Աթոռոյս բոլոր շինութիւնք, որ ի մէջ պարսպաց և արտաքոյ նոցին. այն իսկ են շինութիւն նոր Վեհարանի, Ճեմարանի, Տպարանի և Միաբանութեան և այլք: Ընկալեալ է Մեր իրաւունս բանալոյ տպարան՝ առ ի հրատարակել զպաշտօնական ամսաթերթն «ԷՋՄԻԱԾԻՆ», զոր և տեսանէք իսկ, և զայլ եկեղեցական մատեանս պաշտամանն Հայաստանեայցս Եկեղեցւոյ. բանալ ՃԵՄԱՐԱՆ հոգևոր՝ առ ի պատրաստել պաշտօնեայս Եկեղեցւոյ: Արդէն իսկ ունիմք քանի մի վարդապետս ի նախկին սանուց հեմարանի և Ներսիսեան դպրանոցի, յորոց զոմանս ձեռնադրեցաք յեպիսկոպոսութիւն վասն առաջնորդութեան թեմորէից Խ. Հայաստանի:

Յայտնեմք զուրախութիւն Մեր և զգոհունակութիւն հոգևոր Եղբօր Մերում Տ. Գարեգնի՝ Շնորհազարդ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, որ ընդ եկեղեցական և աշխարհական պատգամաւորք իւրովք նպաստաւոր եղև յոյժ միասնականութեան ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ և բարձր տրամադրութեան ժողովականաց, և առնասարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց: Զնոյն հայտնեմք և Ամենապատիւ Պատրիարքին Երուսաղէմի՝ Տ. Կիւրղի և Տեղապահին Պատրիարքութեան Կ. Պոլսոյ՝ Տ. Արգոր Արքեպիսկոպոսի Արսլանեան:

Օրհնելով զհամայն ժողովուրդ Մեր, զամենայն Եպիսկոպոսունս, զքահանայս և զպաշտօնեայս եկեղեցւոյ, պատուէր Հայրապետական տամք և յորդոր հայրական, զօրացուցանել զեղբայրական սէր առ միմեանս, առ եկեղեցին և առ Մայր Աթոռ նորա, առ պատմական Հայրենիս և Խորհրդային Կառավարութիւն նորա, զի սէր է աղբիւր ամենայն նիւթական, բարոյական և մտաւոր յառաջադիմութեանց և բարգաւաճմանց: Սիրեցեք զմայրենի լեզուն մեր, զգրականութիւն և զպատմութիւն նախնեաց, որ շաղկապք են միութեան և լրութեան ազգիս. մանաւանդ ցուցանել հոգին Մերոյ ի Սփիւռս: Յատուկ պատուէր տամք վերջնոցս, զօրացուցանել և կարգաւորել զդպրոցս, տալով զհայացի դաստիարակութիւն մանկտւոյն, զարբուցանելով ի նոսա սէր առ մայրենի եկեղեցին. որով կարեմք պահել զամբողջութիւն և զմիասնութիւն Ազգիս: Մի խզեսցին մտաւոր և հոգևոր շաղկապք առ պատմական Հայրենիս, որ ծաղկեալ ծաղկի յամենայն մարզս ըստ ամենայն մասանց ընդ հովանեաւ Խ. Իշխանութեան:

Օրհնեմք զազգայինն մեր Մամուլ և յորդորեմք հայրաբար գործել զարբուցանել զգիտակցութիւն և զսէր յայս միտս եղբայրական յարաբերութեան և կենաց:

Պատուէր տամք նաև պանդխտեալ հայոց. որ ի Սփիւռս՝ լինել հաւատարիմ Պետութեանց յորոց գտեալ է նոցա ապաստանութիւն եղբայրական:

Աստաւծոյ յիշել կամիմք և զպառակտեալ վիճակ եկեղեցւոյս մերոյ ի Միացեալ Նահանգս, որ ցաւ է Մեզ և համայն ողջամիտ հայոց: Պատուէր տամք, որոց անկ է, ԼՈՒՄԱՆԵԼ զամենայն ԱՆՁԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՍ, որք չեն հաստատեալ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ իշխանութեամբ. պարտ է նոցա ըստ հոգևորին և ըստ վարչականին ենթակայ լինել Առաջնորդին՝ Տեառն Տիրան Նորապսակ Եպիսկոպոսին. իսկ քահանայից՝ խոստանալ հնազանդութիւն կատարեալ, որպէս վիճակաւոր Առաջնորդին իւրեանց, վերահաստատելով զմիութիւն պառակտեալ հօտին:

Զկարգաւորութիւն գործոյս յանձնեմք ի կատար ածել Տ. Տիրան Եպիսկոպոսի՝ հոգևոր զաւակի Մերում, ըստ մտաց Կոնդակիս:

Յուշ առնեմք ժողովրդականաց Մերոց, իբէ որպիսի չարեաց աղբերք են այդպիսի երկպառակութիւնք ընդ յարկաւ եկեղեցւոյ. յորոց պարտ է զգուշանալ առ ի շինութիւն և ի պահպանութիւն Մայր եկեղեցւոյ:

Բայց ունիմք յայտնել և զուրախութիւն մեծ, եթէ յաղթական վախճան անաւոր համաշխարհային պատերազմիս ըստ առաւելեալ չափու և կարողութեան մասնակից եղև և ազգ մեր համայն՝ առաքելով զորդիս իւր ընդդէմ նախայարձակ թշնամւոյն: Բազում հայազգի զօրավարք և գունդք կազմեալք ի հայոց, որպէս և առանձինն զինուրակնք ի զանազան մասունս զօրաց, ժառանգեցին զանուն քաջութեան և զհերոսութեան, բարձրացուցանելով զանուն Ազգիս ի հերոսական Կարմիր Բանակին և ի համայն Խ. Միութեան: Իսկ մնացեալ քաղաքացիք Խ. Հայաստանի բերին զջան և զաշ-

խատանս օգնական լինելով յաղորութեանն հիւրական և բարոյական օժանդակութեամբ:

Յաւելումբ ասասանօր, թէ առ այս գործ նուիրեալն ի պաշտպանութիւն Հայրենեաց ոչ միայն հաղորացիք Խ. Միութեան ցուցին զբոլորանուէր սէր և զհամակրութիւն, այլ և հատուածք և գաղութք յարտասահմանեան Պետութիւնս՝ ըստ յորդորեանց Մերոց՝ ցուցին զնոյն սէր և զհամակրութիւն, առաքելով դրամական նուէրս ի կազմութիւն Տանկաց Սասունցի Դաւթի և այլ օժանդակութիւնս Կարմիր Բանակին:

Յայտնելով զգոհունակութիւն Մեր զայսմ գործոյ հայրենասիրութեան՝ ցանկամբ և հաւատամբ, զի և յայսմհետէ զնոյն փոյթ և եռանդն ցուցցեն ի շինարարութեան մերոց Հայրենեաց բանիւ և գործով:

Պատգամաւորք եկեալք ի հեռաւոր վայրաց՝ տեսին աչօք իւրեանց զսքանչելի բարգաւաճումն նորաբողջ Հանրապետութեանս Հայաստանի, տեսին զնիւթական շինարարութիւն մայրաքաղաքին. զընդարձակ ծառազարդ պողոտայս և զնարտարապետական գեղեցիկ և հոյակապ շինութիւնս վասն պետական հաստատութեանց և բնակութեանց քաղաքացեաց, տեսին զքէտրոնն փառաւոր, զՏունն Խորհրդի. զհամալսարանական թաղամասն, զբազմատեսակ հիւանդանոցս, զկարգաւորեալ և զնոր Թանգարանս՝ պատմական, գեղարուեստական, զՀանրային գրադարան, զմին ի մեծագունից ի Խ. Իշխանութեան, զՁեռագրատունն կարգաւորեալ և նոր, զպարծանս Ազգին, զՀիմնարկութիւն գիտութեանց և արուեստից, զԱկադեմիայն գիտութեանց, զբազմաճիւղ Համալսարանն. զԿոմիտէն պահպանութեան հնութեանց. զերաժշտանոցն և զդպրոց նկաչութեան և այլն. զբարգաւաճումն երկրագործութեան և այգեգործութեան, զգործարանական և արդիւնաբերական հաստատութեանց. տեսին զնորահաստատ ծաղկեալ գաղութաւանս Նոր-Արաքիրի, Մալաթիայի, Նուբարաշէնի և այլն. զայս ամենայն պարտական եմք հովանաւորութեան Խ. ՄԻՈՒԹԵԱՆ, յանդամոց որոյ մին է և Խ. ՀԱՅԱՍՏԱՆ:

Մաղթեմք զի առաւել զօրացի Խորհրդային Իշխանութիւնն ոչ միայն յօգուտ ազգաց Միութեան. այլ և վասն խաղաղութեան, ազատութեան և բարօրութեան հանուր մարդկութեան:

Ի վերջ բանիս վերստին օրհնելով զհամայն ժողովուրդն Հայոց աղօթս մատուցանեմք առ Բարձրեալն վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան արքոյ եկեղեցւոյ, զի ի խաղաղութեան ծնանի բարօրութիւն ազգաց, ի խաղաղութեան զօրանան կրօն և եկեղեցի:

ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՁԵԶ ԵՎ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԵԱՆ. ԱՄԷՆ:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Գրեցաւ անդրանիկ Կոնդակս օրհնութեան ի 1-ն Ապրիլի 1946 ամի Փրկչական և ըստ Տոմարիս ՌՅՂԵ ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ